Մայիս-Հունիս 2020

# ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ #41

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

էջ 19

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

## ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

էջ 17

2020թ.-ի մայիսի 1-ին մեկնարկեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից ենթադրամաշնորհների տրամադրումը «Կարողությունների զարգացում և հզորացում՝ հանուն Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության» ծրագրի շրջանակներում՝ ուղղված ԼԳԲՏԻ անձանց հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների հզորացմանը:

Առաջին ենթադրամաշնորհը տրամադրվեց «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ին՝ «Ջատագովելով սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքը ք ռեակատարողական հիմնարկներում» ծրագրի իրականացման համար:

Երկրորդ ենթադրամաշնորհը «Կարողությունների զարգացում և հզորացում՝ հանուն Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության» ծրագրի շրջանակներում՝ ուղղված ԼԳԲՏԻ անձանց հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների հզորացմանը:

Երրորդ ենթադրամաշնորհը «Կարողությունների զարգացում և հզորացում՝ հանուն Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության» ծրագրի շրջանակներում՝ ուղղված ԼԳԲՏԻ անձանց հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների և նախաձեռնող խմբերի հզորացմանը:

Հայաստան, 0001, Երևան, Թումանյան 10 բն. 7
NewGenerationNGO@gmail.com
www.ngngo.net
+37460378989 +37460478989
New Generation Humanitarian NGO
@NGNGOArmenia
ngngo.armenia

# ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020թ.-ի մայիսի 26-ին ժնևում տեղի ունեցավ «ՄԻԱՎ-ի և Տուբերկուլոզի հակազդումը COVD-19-ի ընթացքում. քաղաքացիական հասարակության և համայնքների մասնակցության ուժեղացումը Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում» խորագրով առցանց կլոր-սեղան քննարկում, որը կազմակերպվել էր Գլոբալ Հիմնադրամի ղեկավարության և քարտուղարության՝ զարգացող երկրների Պատվիրակության կողմից: Կլոր-սեղան քննարկմանը մասնակցում էր նաև

## ՆՍՀԿ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԳԵՅ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ ԺՆԵՎՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

**«Այսօր մենք բոլորս շատ զգոն ենք և պետք է հասկանանք խոցելի խմբերի հետ աշխատելու, նրանց կողքին լինելու և նրանց հետ միասին պայքարելու կարևորությունը: COVID-19-ի պայմաններում պաշտպանելով ինքդ քեզ պաշտպանիր ուրիշներին»:**
**Սերգեյ Օ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ, ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրերի ղեկավար Սերգեյ Գաբրիլյանը, որը ներկայացրեց COVID-19-ի պայմաններում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գործունեությունը և համավարակով պայմանավորված իրավիճակում կազմակերպության կողմից ձեռնարկված ՄԻԱՎ-ի կանխարգելման միջոցառումները:

Կարևորելով COVID-19-ի դեմ պայքարը և ձեռնարկելով համապատասխան միջոցառումները, Սերգեյ Գաբրիելյանը նշեց, որ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն միաժամանակ կանոնավոր կերպով շարունակում էր ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված գործունեությունը, քանի որ մի համաճարակի դեմ պայքարը չպետք է հանգեցնի մեկ այլ համաճարակի բռնկմանը:

## «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ի ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԵՆ ԱՌԱՎԵԼ ՀԱՍԱՆԵԼԻ ԵՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

Սիրով տեղեկացնում ենք, որ 2020թ.-ի մայիսի 18-ից իր աշխատանքներն է սկսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի մարզային գրասենյակը Վանաձոր քաղաքում: Գրասենյակում գործելու է ՄԻԱՎ-ի կանխարգելման կենտրոն, որտեղ մեր վերապատրաստված խորհրդատուները շահառուներին կտրամադրեն տեղեկություն առկա ծառայությունների մասին, հավասարը՝ հավասարին խորհրդատվություն՝ ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ:

Ցանկացողները կարող են անցնել ՄԻԱՎ վարակի վերաբերյալ անվճար, գաղտնի և անանուն թեստավորում, ինչպես նաև ստանալ կանխարգելիչ և կրթատեղեկատվական նյութեր: Թեստավորման դրական արդյունքի դեպքում մեր խորհրդատուները կուղղորդեն շահառուներին ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն՝ հետագա հետազոտությունների համար:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հանրային առողջության ոլորտում աշխատող ամենաակտիվ կազմակերպություններից է Հայաստանում: Այն իրականացնում է ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրեր Հայաստանի SUS, ԿՍԿ, ԹՆՕ և ԼԳԲՏ անձանց շրջանում:

**Առկա ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն և ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվություն ու հետազոտություն անցնելու համար կարող եք զանգահարել կամ գրանցվել առցանց:**

**+374 60 378989**
**+374 60478989**

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՈՒԺՈՒՄԸ ԱՐԴԵՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է ԵՐԵՎԱՆՈՒՄ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն իրականացնում է ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրեր խոցելի խմբերի շրջանում Հայաստանի ամբողջ տարածքում: Գիտակցելով սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (ՍՃՓՎ) ունենալու դեպքում ՄԻԱՎ-ի նկատմամբ կրկնակի խոցելիությունը՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն համագործակցություն է հաստատել Երևանում «Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն»-ի հետ:Համագործակցության շրջանակներում «ՏՍՏ-ների, Տրանս* անձանց և ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելում» ծրագրի շահառուները հնարավորություն ունեն անցնելու ՍՃՓՎ անվճար հետազոտություն և անհրաժեշտության դեպքում բուժում:

### ՀԵՐԹԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ ՆՍՀԿ ՄԻԱՎ-Ի ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

կանխարգելման ծրագրերի համակարգող Արտյոմ Մովսեսյանը, որը ծրագրի աութրիչների հետ մասնակցում էր «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում» կազմակերպված «ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն ինքնաթեստավորման միջոցով» թեմայով վերապատրաստման դասընթացին:

Դասընթացը կարևոր է նրանով, որ անմիջականորեն թիրախային խմբերի հետ աշխատող անձինք, այս դեպքում՝ աութրիչ աշխատակիցները, ամրապնդում են ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրենց գիտելիքների պաշարներն ու ձեռք են բերումհամապատասխան ասնագիտական հմտություններ իրենց իսկ շահառուների

ՄԻԱՎ-ը՝ Մարդու իմունային անբավարարության վիրուսը, ժամանակին ախտորոշելու դեպքում լիովին վերահսկելի է, այնինչ մինչ օրս շատերը ՄԻԱՎ-ը նույնացնում են ՁԻԱՀ-ի՝ ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի հետ և ախտորոշումը համարում մահվան դատավճիռ: Իրականում ՁԻԱՀ-ը ՄԻԱՎ-ի վերջնային փուլն է: ՄԻԱՎ-ի վերաբերյալ պարբերաբար հետազոտվելը կօգնի ժամանակին հայտնաբերել և վերահսկել այն: «ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը դարձել է առավել հասանելի, քան երբևէ»,- ասում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող ՄԻԱՎ-ի շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցկացնելու համար: Սա իր հերթին հնարավորություն է ստեղծում այս հետազոտությունը դարձնել առավել հասանելի այն խմբերի համար, որոնց հետ աշխատում է կազմակերպությունը: Դասընթացը բաժանված էր տեսական և գործնական մասերի: Առաջին հատվածում ՀՀ Առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի մոնիթորինգի և գնահատման մասնագետ Նաիրա Սերգեևան անդրադարձավ ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի իրավիճակին Հայաստանում, խոսեց ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խմբերից, ՄԻԱՎ-ի կանխարգելումից և թեստավորման կարևորությունից, բուժման ընթացքից, ինչպես նաև ներկայացրեց սեռական ճանապարհով փոխանցվող վարակների վերաբերյալ արված հետազոտություններ: Դասընթացը շարունակեց ՁԿՀԿ աշխատակից Մարինե Ասրյանը,

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

որը խոսեց աուրիչ աշխատանքից, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության հիմնական սկզբունքներից ու հմտություններից, ինչպես նաև թեստերի տարբեր պատասխանների դեպքում խորհրդատվության առանձնահատկություններից: Օրվա երկրորդ հատվածում սեմինար-վարժանքի մասնակիցները ՁԿՀԿ բժշկուհի Սուսաննա Մուրադյանի հետ բացահայտեցին ինքնաթեստավորման առանձնահատկությունները, սովորեցին հետազոտության արդյունքների ճիշտ մեկնաբանումը, գործնականում իրականացրին թեստավորում և ծանոթացան ՄԻԱՎ-ի ախտորոշման լաբորատորիայի աշխատանքներին:

Հիշեցնենք, որ «2017 թվականի օգոստոսից ՆՍՀԿ-ի շահառուներն արդեն իսկ հնարավորություն ունեն անվճար, գաղտնի և անանուն ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնել լնդային տրանսուդատի արագ թեստերի միջոցով: Սա ենթադրում է, որ որպես խորհրդատու վերապատրաստված աուրիչ աշխատակիցը կարող է հետազոտություն իրականացնել ինչպես ՀԿ-ի գրասենյակում, այնպես էլ շահառուի տանը և այն վայրերում, որտեղ հնարավոր է ապահովել հետազոտության իրականացման համար անհրաժեշտ նախապայմանները՝ ջերմաստիճան, լուսավորություն, գաղտնիություն և այլն»:




Թեստավորման վերաբերյալ վիդեոուղեցույցին կարող եք ծանոթանալ սկանավորելով QR կոդը:

## ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ. ԱՌՑԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՑ

2020թ.-ի հունիսի 26-ին տեղի ունեցավ առցանց դասընթաց «Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոնի» բժիշկ-սեքսապաթոլոգ Անդրանիկ Ղարիբյանի և «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի աուրիչ աշխատողների մասնակցությամբ: Դասընթացի նպատակն էր ՆՍՀԿ աուրիչներին տրամադրել տարրական գիտելիքներ սեռավարակների վերաբերյալ՝ շահառուներին խորհրդատվություն




տրամադրելու և թեստավորելու ընթացքում առավել պրոֆեսիոնալ մոտեցում ցուցաբերելու համար:

Քննարկման ընթացքում բժիշկը ներկայացրեց սեռավարակների տեսակները, դրանց փոխանցման ուղիները, կանխարգելման ու բուժման եղանակները: Հատուկ անդրադարձ կատարվեց նաև ՄԻԱՎ-ի կանխարգելման եղանակներին՝ հաշվի առնելով ՆՍՀԿ աուրիչ աշխատողների աշխատանքային առանձնահատկությունները և թեստավորման ընթացքում նրանց գիտելիքների կարևորությունը: Թեմայի քննարկումն ուղեկցվեց ակտիվ հարցադրումներով և պարզաբանումներով:

Գիտակցելով սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (ՍՃՓՎ) ունենալու դեպքում ՄԻԱՎ-ի նկատմամբ կրկնակի խոցելիությունը՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի շրջանակներում համագործակցություն է հաստատել Երևանում «Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն»-ի հետ:

# ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ն ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն տրամադրում է իրավական խորհրդատվություն և փաստաբանական աջակցություն: Իրավական աջակցություն տրամադրվում է այն ԼԳԲՏԻ անձանց և կոմերցիոն սեռական ծառայություն մատուցող կանանց (ԿՍԿ), որոնք ենթարկվել են խարանի, խտրականության, բռնության և խոշտանգումների, COVID-19-ի համավարակի հետևանքներով պայմանավորված մնացել են առանց ապաստարանի և ընտանիքի աջակցության, կորցրել են աշխատանքը և չունեն այլ ֆինանսական եկամուտ: Իրավական աջակցություն ստանալու համար կարող եք դիմել մեզ սքանավորելով QR կոդը:

Աջակցություն ստանալու հայտ

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՋՄՎԵԼ Է ԿԱՐԳԱԴՐԱԳԻՐ՝ ՈՒՂՂՎԱԾ «ԻԶՄԻՐԼՅԱՆ» ԲԿ-ԻՆ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի դիմումի հիման վրա 2020թ.-ի ապրիլի 29-ից մինչև մայիսի 5-ը ներառյալ «Իզմիրլյան» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվել է զննում: Արդյունքում պարզ է դարձել, որ. 1. Ինքնուրույն, սեփական նախաձեռնությամբ 2020թ.-ի մարտի 16-ին, ժամը 11:00-ի սահմաններում Ընկերություն դիմած Ռ. Խ.-ին պրոկտոլոգիական 1-ին բաժանմունքում մատուցվել է բժշկական օգնություն և սպասարկում՝ առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված փաստաթղթերի լրացման և վարման պահանջների պահպանման:

2. Ընդունարանում լրացվող, վարվող և շրջանառվող բժշկական փաստաթղթերում բացակայում են գրառումները Ընկերություն դիմած վարակիչ հիվանդության կասկածով պացիենտի բոլոր անհրաժեշտ ախտորոշիչ հետազոտությունները և համապատասխան բժիշկ մասնագետի խորհրդատվությունն ընդունարանի մեկուսարանում իրականացնելու մասին, որով խախտվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

3. Ընկերության Ընդունարանում չի իրականացվել Պացիենտի ընդունումը, հաշվառումը, զննումը համապատասխան բժիշկ մասնագետների կողմից և Պացիենտի հիվանդանոցային (ստացիոնար) բուժման որոշման կայացումը, սահմանված բժշկական փաստաթղթերի ձևակերպումը, որով խախտվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները: Ելնելով վերոգրյալից, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը «Իզմիրլյան» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ ի դեմս տնօրեն Արմեն Չարչյանի, ԿԱՐԳԱԴՐԵԼ է Կարգադրագիրը ստանալու օրվանից 30-օրյա ժամկետում ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ ապահովելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 19.3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ՀՀ առողջապահության նախարարի 2014թ.-ի փետրվարի 14-ի «Հիվանդանոցային բժշկական կազմակերպություններում կիրառվող մի շարք բժշկական փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» N 02-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետի, ՀՀ առողջապահության նախարարի 2007թ.-ի նոյեմբերի 26-ի «Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտի, երեխաների բժշկական հսկողության ամբուլատոր քարտերի, նորածնի փոխանակման քարտի և նախածննդային պատրոնաժի թերթիկի ձևերը հաստատելու մասին» N 1752-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետի, ՀՀ առողջապահության նախարարի 2019թ.-ի հոկտեմբերի 18-ի «Հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության ընդունարանում պացիենտի վարման գործելակարգը հաստատելու մասին» N 44-Ն հրամանի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջները:

## ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ն ԵՎ «ԲԱՎԱՐԻԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ» ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«Բավարիայի երիտասարդական խորհուրդի» (BJR) և «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի միջև համագործակցությունը արդեն 2 տարեկան է, և մենք ուրախ ենք, որ համագործակցությունը տալիս է իր կայուն պտուղները երիտասարդական հիմնախնդիրների կարգավորման ոլորտում:

Երկու կազմակերպությունների նպատակները համընկնում են, այն է՝ երիտասարդների ակտիվությունն ու քաղաքացիապես կայացումը:

Դեռևս 2018 թ-ից սկսված փոխհամագործակցության հիմքում ընկած ծրագրերից են երիտասարդների փոխանակման ծրագրերի իրականացումը, որին մասնակցում են Հայաստանի և Գերմանիայի երիտասարդական հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ները և ոչ ֆորմալ խմբերը, անհատ երիտասարդները: 2020 թ-ին ուրախությամբ արձանագրում ենք, որ ծրագիրը ստացել է ֆինանսավորում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Միջազգային հարաբերությունների դաշնային նախարարության կողմից և նախատեսվում է 2020թ-ի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին երիտասարդական հիմնախնդիրներով զբաղվող ՔՀԿ-ների շրջանում իրականացնել փոխանակման կրթական և հզորացմանն ուղղված ծրագիր ժողովրդավարական կրթության վերաբերյալ, որի շրջանակներում նաև նախատեսվում է երիտասարդական հիմնախնդիրների լուծմանն ուղղված փոքր դրամաշնորհների տրամադրում: Ծրագրի մեկնարկին տեղի ունեցավ առաջին կազմակերպչական հեռահաղորդակցությունը, որին մասնակցում էին «Բավարիայի երիտասարդկան խորհուրդի» նախագահ Մաթիաս ՖԱՔԸ, «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ, ԲԵԽ նախագահական գրասենյակի ղեկավար Պատրիկ ՎՈԼՖԸ, ՆՍՀԿ ֆինանսական ղեկավար Արման ՍԱՀԱԿՅԱՆԸ, ԲԵԽ-ի ծրագրերի համակարգող Կատերինա ԿՈՒԴԻՆԸ: Շարունակելի...

### ՍԻՐԵԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ ԵՎ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ ՄԵՐ ԹԻՄԸ ՀԱՄԱԼՐՎԵԼ Է: ՄԵԶ ԵՆ ՄԻԱՑԵԼ ԻՐԱՎԱԲԱՆ ԼՈՒՍԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՆԱՐԵԿ ԴԱՎԹՅԱՆԸ:

Նարեկ Դավթյանը սովորում է Բրյուսովի պետական համալսարանում «Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն» մասնագիտությամբ:
2017 թվականին ԱՄՆ կառավարությունից կրթաթոշակ է շահել և մեկ տարի սովորել ամերիկյան ավագ դպրոցում
Հանդիսանում է “FLEX” փոխանակման ծրագրի շրջանավարտ
Ազատ ժամանակ զբաղվում է քեմփինգով, լուսանկարչությամբ և վազքով:

Լուսինե Գասպարյանը մասնագիտությամբ իրավաբան է:

- 2014-2018թ.թ. սովորել է Երևանի Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետում:
- 2018 թ.-ի մարտ-սեպտեմբեր ամսիներին աշխատել է «Իրավական հետազոտության և զարգացման կենտրոն» ՀԿ-ում որպես արդար դատաքննության իրավունքի մշտադիտարկող,
- 2019թ. հունվար-հուլիս ամիսներին նույն կազմակերպությունում աշխատել է որպես արդար դատաքննության իրավունքի փորձագետ,
- 2019թ. հոկտեմբերից 2020թ. մարտ աշխատել է «Հայաստանի Հելսինկյան կոմիտե»-ում, որպես քաղաքացիաիրավական հարցերով իրավախորհրդատու,
- 2020թ. փետրվարին «Իրավունքը ԵՍ եմ» նախաձեռնող խմբում աշխատել է որպես «Երբ կանայք իրավահավասար են» ծրագրի ղեկավար,
- 2020թ. հունիսից աշխատում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ում որպես իրավաբան,Մասնակցել է մի շարք մարդու իրավունքների դասընթացների:

## ԱՅԼՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԴԻԱ

Մարտի 11-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը որակեց Կորոնավիրուսը որպես պանդեմիա, որով պայմանավորված աշխարհի գրեթե բոլոր երկրների կառավարությունները սկսեցին գործողությունների շարք՝ համաճարակի հետևանքները մեղմելու ուղղությամբ: Առանձնահատուկ ուշադրություն և հոգածություն է ցուցաբերվում այս համաճարակի նկատմամբ առավել խոցելի խմբերին՝ տարեցներին և քրոնիկ հիվանդություններ ունեցող անձանց:

### ՄՇՏԱՊԵՍ ԽՈՑԵԼԻ. ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ՝ ՊԱՆԴԵՄԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Սակայն ոչ միայն պանդեմիայի ժամանակաշրջանում, այլև մշտապես խոցելի համարվող ոչ բոլոր խմբերն են կառավարությունների հոգածության ներքո: Մասնավորապես՝ գեյ, լեսբի, բիսեքսուալ, տրանս և ինտերսեքս (ԼԳԲՏԻ) անձանց խոցելիությունն ու կարիքները անգամ քննարկման չեն արժանացել բազմաթիվ երկրներում: Հայաստանում ևս ԼԳԲՏԻ անձանց կարիքների գնահատում չի արվել, և գուցե հնարավոր էլ չլինի անել, քանի որ այդ համայնքի վերաբերյալ չկան պաշտոնական վիճակագրական տվյալներ: Առկա ոչ պաշտոնական տվյալներն էլ չեն կարող լինել ամբողջական և լիարժեք հավաստի, քանի որ նույնասեռական անհատների ճնշող մեծամասնության համար ցանկալի չէ նույնականացվել որպես մշտապես թիրախավորված համայնքի ներկայացուցիչ: Այնուամենայնիվ, պանդեմիայի շրջանում ԼԳԲՏԻ անձինք առավել խոցելի են, և այդ խոցելիությունը որոշակիորեն կարելի է գնահատել առնվազն երկու ուղղություններով՝ առողջապահական ոլորտի ծառայությունների հասանելիություն և սոցիալական ապահովություն: Հեղինակավոր Human Rights Watch իրավապաշտպան կազմակերպությունը տեղեկացնում է, որ ԼԳԲՏԻ անձինք խտրականության են ենթարկվում առողջապահական ծառայությունների մատուցման ոլորտում: Կազմակերպությունը նման խնդիր է արձանագրել մի շարք երկրներում, այդ թվում՝ ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Ճապոնիայում, Լիբանանում: Պանդեմիայով պայմանավորված մարդու իրավունքների պաշտպանության շուրջ մտահոգությունների վերաբերյալ փաստաթղթում կ ազմակերպությունը նշում է, որ կառավարությունները պետք է ապահովեն առողջապահական ծառայությունները առանց որևէ խտրականության և խարանի: Հայաստանում այդպիսի խնդիրներ է արձանագրել «Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպությունը՝ ԼԳԲՏԻ անձանց առողջապահական իրավունքների խախտումների վերաբերյալ 2019 թվականի ազգային զեկույցում նշելով, որ առողջապահական իրավունքների խախտումները հիմնականում ուղեկցվում են նաև այլ իրավունքների խախտմամբ: «Նոր Սերունդ» ՄՀԿ-ն այս օրերին որևէ ահազանգ չի ստացել ԼԳԲՏԻ համայնքից Հայաստանի առողջապահական համակարգում խտրականության վերաբերյալ : Սակայն կազմակերպությունն արձանագրում է, որ արտակարգ իրավիճակ հայտարարելիս հաշվի չի առնվել ՄԻԱՎ-ի ու ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրերի իրականացումը ԼԳԲՏԻ, ԹՆՕ (թմրամիջոցների ներարկային օգտագործող) և ԿՍԿ (կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանայք) մարդկանց շրջանում: Կազմակերպությունն, այնուամենայնիվ, փորձում է իր աութրիչների ներգրավման միջոցով, պահպանելով սոցիալական հեռավորությունն ու հակահամաճարակային ցուցումները, շահառու ռիսկային խմբերին ապահովել համապատասխան նյութերով: Սակայն հայտնի է, որ հատկապես տրանս անձինք խնդիրներ են ունենում բժշկի դիմելիս, նրանցից շատերը խուսափում են դիմել բժշկական ծառայություններ մատուցող կենտրոններ՝ ավելորդ հարցերից և խտրական

վերաբերմունքից խուսափելու համար: Օրինակ, Մեծ Բրիտանիայի առողջապահական համակարգում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության բազմաթիվ դեպքեր են գրանցվել, որի հետևանքով ԼԳԲՏԻ անձանց 14%-ը խուսափում է բժշկական օգնության դիմելուց (LGBT in Britain Health report): Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող Human Rights Campaign կազմակերպության տվյալներով՝ համաճարակի պայմաններում ԼԳԲՏԻ անձինք առավել խոցելի են առողջապահական ռիսկերի առումով, մանավանդ, որ նրանց 21%-ը քրոնիկ հիվանդություն՝ ասթմա ունի, իսկ 17%-ն էլ չունի բժշկական ապահովագրություն: ՀՀ Կառավարությունը երկու շաբաթ առաջ հաստատել է Կորոնավիրուսի հետևանքների հակազդման միջոցառումների համապարփակ ծրագիրն ու տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումները: Ծրագրի ուղղություններից մեկը սոցիալապես անապահով ու խոցելի խմբերի սոցիալական անվտանգության ապահովումն է: Թեև ներկայացված չէ խոցելի խմբերի սպառիչ ցանկ, այնուամենայնիվ, Կառավարության կողմից մինչ օրս հատկացվող օժանդակության ծրագրերից որևէ մեկը նախատեսված չէ ԼԳԲՏԻ անձանց համար: Սրա պատճառներից մեկն էլ թերևս Հայաստանում ԼԳԲՏԻ համայնքի վերաբերյալ լայնամասշտաբ և խորքային հետազոտությունների բացակայությունն է: Համայնքի խոցելիությունը չափված ու փաստաթղթավորված չէ, չկան տվյալներ այն մասին, թե ԼԳԲՏԻ անձանցից քանիսն են այս օրերին զրկվել աշխատանքից, քանիսն էին աշխատում օրավարձով՝ առանց պայմանագրի ու գրանցման, քանիսը սննդի ու կենսական անհրաժեշտության պարագաների պակաս ունեն: ԼԳԲՏԻ անձանցից շատերն են խտրականության ենթարկվում աշխատաշուկայում (ԱՄՆ-ում՝ ԼԳԲՏԻ անձանց 20%-ը), ուստի աշխատանք ընտրելու հնարավորությունները նրանց համար շատ ավելի սահմանափակ են, քան ոչ ԼԳԲՏԻ անձանց համար: Նույնասեռական անձանցից շատերն են աշխատում սպասարկման ոլորտում (ԱՄՆ-ում՝ 15%-ը): Սա նշանակում է, որ երկրում արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ ԼԳԲՏԻ անձանց շրջանում գործազրկության տոկոսն ավելի բարձր է: Հետազոտությունների բացակայության պայմաններում անհնար է ստույգ թվերով հիմնավորել այս պնդումը, սակայն «Նոր սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպության ստացած ահազանգերը ևս վկայում են, որ ԼԳԲՏԻ համայնքում սոցիալապես անապահով մարդիկ զգալի տոկոս են կազմում. վերջին 10 օրում 364 դիմում, որի զգալի մասը աշխատանքի բացակայության և բնակարանի վարձավճարների վերաբերյալ: ԱՄՆ-ում, օրինակ, ԼԳԲՏԻ անձանց ամեն հինգերորդն ապրում է աղքատության մեջ, իսկ անտուն երիտասարդների 40%-ն իրենց նույնականացնում են որպես ԼԳԲՏԻ անձ (տվյալները՝ Human Rights Campaign-ի): «Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազակերպության կողմից պատրաստած 2018-2019 թվականների զեկույցը ևս փաստում է, որ հայաստանյան հասարակությունն անհանդուրժողականություն ու ագրեսիա է ցուցաբերում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ, ուստի արտակարգ իրավիճակների պայմաններում ՀՀ Կառավարության կողմից ԼԳԲՏԻ համայնքի նկատմամբ հոգածություն ցուցաբերելը կարող է սվիններով ընդունվել, մանավանդ որ մինչ այդ էլ Փաշինյանի կառավարությանը քաղաքական շահարկումների նպատակով մեղադրել են ԼԳԲՏԻ համայնքին հովանավորելու մեջ: Ուստի դժվար է ակնկալել, թե ՀՀ Կառավարությունն իր աջակցության ծրագրերից որևէ մեկը կուղղի այս համայնքի կարիքավոր ներկայացուցիչների խնդիրները լուծելուն: Նման պայմաններում անհրաժեշտ է համայնքի ներսում փոխօգնության խմբերի ձևավորումն ու միմյանց հոգեբանական, նյութական և կացարանային աջակցություն տրամադրելը: Պանդեմիայի պայմաններում ԼԳԲՏԻ համայնքի ներսում ևս համերաշխության և փոխաջակցության մթնոլորտի ձևավորումը էական գործոն կարող է լինել առողջապահական, սոցիալական և իրավական ոլորտներում ծագող խնդիրները հաղթահարելու համար: Արտակարգ իրավիճակում ԼԳԲՏԻ անձանց կացության և անվտանգության խնդիրներին կանդրադառնանք մեր հետագա հրապարակումներում:

Արման Ղարիբյան
Անկախ լրագրող

## ԱՅԼՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԴԻԱ

«Covid-19» համավարակով պայմանավորված՝ աշխարհի տարբեր երկրներ իրենց հիմնական ռեսուրսներն ուղղում են առողջապահական և սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարմանը: Հայաստանը ևս բացառություն չի կազմում: Մեր երկրում նույնպես ձեռնարկվում են համավարակի հետևանքների չեզոքացմանն ուղղված զանազան միջոցառումներ, սակայն ստեղծված արտակարգ իրավիճակում երկրորդ պլան է մղվել խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությունը: Մի կողմից՝ «խոցելի» բառի իմաստը նեղացել է՝ կենտրոնանալով հիմնականում տարեցների վրա, մյուս կողմից՝ բոլորն են խոցելի դարձել համավարակի առջև: Այնուամենայնիվ, թունելի վերջում լույս երևում է. առաջավոր գիտահետազոտական կենտրոնների կանխատեսումների համաձայն՝ վարակի պատվաստանյութը վաղ թե ուշ կհայտնաբերվի: Իսկ ատելությա՞ն պատվաստանյութը: Դե, մեծ հաշվով, այն վաղուց կա, բայց որոշ օրգանիզմներ չեն ընդունում բարությունն ու հանդուրժողականությունը: Արդյունքում, ատելությունը բարդություններ է տալիս, ախտահարում օրգանիզմը, սուր վարակիչ հիվանդության պես տարածվում: Այնուհանդերձ, պետական մակարդակով արտակարգ

միջոցառումներ չեն ձեռնարկվում, ու ատելությունը մի տեսակ սովորական է դառնում: Օրինակ՝ ԼԳԲՏԻ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս) անձինք բախվում են դրան ամեն քայլափոխի՝ սկսած սեփական ընտանիքից մինչև բուժհաստատություններ ու կրթօջախներ: Այս մասին միաբերան բարձրաձայնում են «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ նախագահ Նարե Հովհաննիսյանը, «Նոր Սերունդ» մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը և նույն կազմակերպության աշխատակիցներ Արման Սահակյանը, Ալինա Միրզոյանը և Անահիտ Մկրտչյանը: Ըստ մեր զրուցակից իրավապաշտպանների՝ հայ հասարակության մեջ արմատացած խարանն ու խտրականությունը, օրենսդրական բացերն ու պետության խուսափողական քաղաքականությունը պարարտ հող են ստեղծում ատելության խոսքի արմատացման համար: Ու շատ չանցած՝ խոսքը դառնում է գործ, որոշ դեպքերում էլ՝ քրեական: Օրինակ՝ մի քանի ամիս առաջ Երևանի և ՀՀ մարզերի բանուկ փողոցներում Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման դեմ ստորագրահավաք իրականացնող «Կամք» նախաձեռնության հոմոֆոբ անդամները չբավարարվեցին մանիպուլյատիվ հնարքների միջոցով անցորդներից ստորագրություններ կորզելով: Ազգային արժեքների «անձնուրաց առաջամարտիկների» դեմ քրեական գործ հարուցվեց՝ստորագրահավաքի ընթացքում գյուղացի պապիկների ծեծի ենթարկելու համար: Դե հո չէի՞ն կարող շեղվել «Մեծին լսի՛ր, բայցև ծեծի՛ր» «ավանդական» բարոյախոսությունից... Թեպետ, անկեղծ ասած, մի փոքր շեղվել են՝ ձեռքի հետ ծեծելով նաև մի երիտասարդ տղայի: «Կնամեծար» պարոնները հասցրել են նաև մի աղջկա հարվածել ու հայհոյել: Մեկ այլ դեպքում էլ «ավանդական» արժեքներով տոգորված մի կիսամերկ երիտասարդ ոչ պակաս ավանդական «զելյոնկա» լցրեց Հանրապետության հրապարակում ելույթ ունեցող ինքնագործ խմբակի մասնակիցներից մեկի վրա, ով իր կարծիքով սատանիստ լեսբի էր: Հետո «քիմիկոս» երիտասարդը, ով համատեղության կարգով նաև հրեատյաց է, մամուլի ասուլիս հրավիրեց, որում մանրամասն նկարագրում էր «զելյոնկայով» լուծույթի

բաղադրատոմսը, պատրաստման եղանակը և կիրառման առանձնահատկությունները: Հենց նույն ասուլիսի ընթացքում հիշատակվեց մի տեսանյութ, որից դատելով կարելի է եզրակացնել, որ էկզիբիցիոնիստական հակումներով աչքի ընկնող երիտասարդը լատենտ նույնասեռական է, ով անսպասելի կանաչագրոհով փորձում էր ցրել իր կողմնորոշման հետ կապված հնարավոր կասկածները: Թերևս հենց նույն նպատակով էլ նա սպառնալիքներ էր տեղում իրավապաշտպանների՝ մասնավորապես «Նոր Սերունդ» և «Փինք» կազմակերպությունների աշխատակիցների հասցեին՝ հընթացս զրպարտելով նրանց մանկապղծության և անչափահասներին այլասերելու մեջ: Թեպետ Թավշյա հեղափոխությունը մեկ քայլ առաջ էր մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, ցավոք, նմանատիպ զազրելի երևույթները շարունակվում են հետհեղափոխական շրջանում: Դեռ ավելին, «Նոր Սերունդ» ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանն ընդգծում է, որ հեղափոխությունից հետո ատելության խոսքը և բռնության քարոզը նոր թափ են ստացել: Ըստ նույն կազմակերպության ծրագրերի համակարգող Ալինա Միրզոյանի՝ սա բացատրվում է այն հանգամանքով, որ ՀՀ նախկին իշխանությունները ԼԳԲՏԻ համայնքի հետ կապված ցանկացած հարց օգտագործում են որպես մանիպուլյատիվ գործիք՝ հասարակությանը գործող իշխանության դեմ տրամադրելու համար: Որոշ ընդդիմադիր շրջանակների կողմից ուղղորդվող ԶԼՄ-ներն ու առցանց հարթակները ողողված են բռնության կոչերով և սպառնալիքներով: Մարդիկ էլ հաճախ խայծը կուլ են տալիս՝ առանց դույզն-ինչ կասկածելու, որ թեման շահարկվում է զուտ քաղաքական շարժառիթներով: Ու քանի որ «գողական աշխարհի» չգրված օրենքները շարունակում են ակտուալ մնալ նաև քրեակատարողական հիմնարկներից դուրս, ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների հետ նորմալ մարդկային շփում ունեցող մարդիկ և հատկապես իրավապաշտպանները հաճախ նույնացվում են նրանց հետ՝ արժանանալով նույնպիսի խտրական վերաբերմունքի: Անդրադառնալով այս խնդրին՝ Ալինա Միրզոյանը վկայակոչում է 2018թ.-ին Հայաստանում կայանալիք ԼԳԲՏԻ Քրիստոնյաների ֆորումի հետ կապված զարգացումները: Ֆորումը չեղարկվեց ԼԳԲՏԻ անձնանց և նրանց հիմնահարցերով զբաղվող իրավապաշտպանների հասցեին սպառնալիքների, ատելության քարոզի, բռնության կոչերի և առարկայական դրսևորումների պատճառով: Այս կոչերի հիմնական թիրախներից էր «Նոր Սերունդ» մարդասիրական ՀԿ-ն՝ որպես Հայաստանում ֆորումը հյուրընկալող կազմակերպություն: Սպառնալիքներից զերծ չմնացին նաև կազմակերպության շահառու խմբերը: Այդ ամենը հանգեցրեց նրան, որ կազմակերպությունը ստիպված էր ժամանակավորապես դադարեցնել իր գործունեությունը: Մեր զրուցակից իրավապաշտպանները պնդում են, որ վերոնշյալ մարտահրավերները հնարավոր է հաղթահարել համալիր մոտեցմամբ: Քանի որ հոմոֆոբիան հաճախ սերում է թյուր պատկերացումներից և իրազեկվածության ցածր մակարդակից, անհրաժեշտ է նախևառաջ կրթական գործունեություն ծավալել հայ հասարակության շրջանում՝ այս զգայուն թեմայի վերաբերյալ հանրային իրազեկությունը բարձրացնելու նպատակով: Զուգահեռաբար, պետք է լրացնել օրենսդրական բացերը: Թեպետ «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը շրջանառվում է դեռևս 2018 թվականից, օրենքը մինչ օրս չի ընդունվել: Իրավապաշտպաններ Սերգեյ Գաբրիելյանը և Նարե Հովհաննիսյանը նախագիծը համարում են թերի՝ փաստելով, որ դրանից իսպառ բացակայում են սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունն արգելող դրույթները: Բացի այդ՝ իրավապահ համակարգում հաճախ սոլիդարությամբ են վերաբերվում բռնարարներին մասնավորապես այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ԼԳԲՏԻ համայնքի իրավունքների ոտնահարմանը. զուր չէ, որ ավելի վաղ հիշատակված կիսամերկ երիտասարդը տխրահռչակ ասուլիսի ընթացքում շնորհակալություն էր հայտնում ոստիկաններին միջադեպից հետո իր հանդեպ ցուցաբերված բարեհամբույր վերաբերմունքի համար: Փաստաբան Անահիտ Մկրտչյանը նշում է, որ իրավական կարգավորում պահանջող խնդիրներից մեկն էլ այն է, որ Հայաստանում նույնասեռականությունը դասվում է հոգեկան խանգարումների շարքին, թեպետ

## ԱՅԼՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԴԻԱ

այն վաղուց ի վեր որպես հիվանդություն չի դիտարկվում Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից: ԼԳԲՏԻ համայնքի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման հաջորդ կարևորագույն լծակը պետական հոգածությունն է: Մեր զրուցակից իրավապաշտպանները կիսում են այն տեսակետը, որ ներկայումս բավարար մակարդակով պետական հոգածություն չի տրամադրվում ԼԳԲՏԻ համայնքին: Ասվածի ամենաթարմ օրինակը կապված է համավարակի ազդեցության չեզոքացմանն ուղղված սոցիալական ծրագրերի հետ: Ինչպես նշում է «Նոր Սերունդ» ՀԿ ֆինանսական համակարգող Արման Սահակյանը, դրանցից և ոչ մեկում հաշվի առնված չեն ԼԳԲՏԻ համայնքի կարիքները, մինչդեռ համայնքի անդամները կրկնակի խոցելի են դարձել արտակարգ իրավիճակում: Այս մտահոգությունը կիսում է Նարե Հովհաննիսյանը: Իրավապաշտպանները պարզաբանում են, որ ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչներից շատերը չգրանցված աշխատողներ են (մատուցողներ, բարմեններ, վարսավիրներ), ինչը զգալիորեն նվազեցնում է նրանց՝ սոցիալական ծրագրերից օգտվելու հնարավորությունը: Բացի այդ՝ շատերը ենթարկվում են ընտանեկան բռնության իրենց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության համար: Ուստի, արտակարգ իրավիճակի պայմաններում աճում է նրանց նկատմամբ ֆիզիկական բռնության և հոգեբանական ճնշումների հավանականությունը: Եթե սովորական իրավիճակում ոմանք կարողանում են բնակարան վարձել թեկուզ չգրանցված աշխատանքից ստացվող եկամուտով, այս օրերին նրանք կարող են ընդհուպ փողոցում հայտնվել: Ընդ որում, համայնքի ներկայացուցիչների համար բնակարան վարձելը մեծ դժվարություն է ներկայացնում անգամ սովորական պայմաններում: Բանն այն է, որ վարձատուներից շատերը խտրական մոտեցումների պատճառով խուսափում են իրենց բնակարանը վարձակալության տալ ԼԳԲՏԻ անձանց: Անդրադառնալով պետական աջակցության հարցին՝ Սերգեյ Գաբրիելյանը, Նարե Հովհաննիսյանը, Ալինա Միրզոյանը և Արման Սահակյանը նշում են, որ ԼԳԲՏԻ իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ների և պետության միջև համագործակցությունը պատշաճ մակարդակով չի իրականացվում, քանի որ պետության կողմից փոխգործակցության բավարար պատրաստակամություն չկա: Ուստի անհրաժեշտ է ամրապնդել պետության և ՀԿ-ների միջև համագործակցությունը՝ որոշումների կայացման գործընթացում ներգրավելով ինչպես շահագրգիռ ՀԿ-ներին, այնպես էլ ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչներին: Այսպիսով, ԼԳԲՏԻ համայնքի առջև ծառացած հիմնահարցերի լուծման համար անհրաժեշտ է իրականացնել կրթադաստիարակչական և իրավական բարեփոխումներ՝ միաժամանակ ամրապնդելով ԼԳԲՏԻ համայնքին ուղղվող պետական աջակցությունը, ինչպես նաև պետության ու հասարակական կազմակերպությունների համագործակցությունը:

Հեղինակ՝ Կ. Ա

## ԳԵՅ ԱՆՁԱՆՑ ԿՅԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: ՄԱՍ 1

Արտակի հետ ավելի վաղ կապվել չստացվեց. ոստիկանությունում էր, քիչ առաջ է դուրս եկել ու տուն է գնում: Առերեսման առաջին օրն էր այն չորս տղաների հետ, որոնցից մեկը նախորդ տարի ամռանը Հանրապետության հրապարակից ոչ հեռու դանակով հարվածեց Արտակի թիկունքին, ու մինչև մարդիկ կհավաքվեին, փախավ, ինչպես անում են միշտ: «Արտասահմանից նոր էի եկել ու առաջին անգամ հանդիպում էի ընկերներիս, շոգ օր էր, ես գլխարկով էի, բայց տակից երկար մազերս երևում էին, ընկերոջս մազերը նույնպես երկար էին ու դեղին ներկած: Կանգնած խոսում էինք, ու կողքներովս մի քանի տղա անցան, մի տեսակ նայեցին ու ոչ հաճելի բաներ ասացին՝ մեր սանրվածքի հետ կապված: Ես զգացի, որ իրանց պահվածքը ադեկվատ չի, որովհետև դեռ հեռվից իրանց բարձր, տարօրինակ ծիծաղը լսվում էր,

էդպես մի երկու բան ասացինք ու մտանք ՎիվաՍել*՝ մեր գործով զբաղվելու: Իմ հետևից տղաներից մեկը ինձ դուրս է կանչում. իբր բան կա խոսալու: Ես դուրս եմ գալիս թե չէ, սրանք սկսում են խփել, ընկերներս են խառնվում, իրենք էլ են մի քանի հարված ստանում, ու հենց մարդիկ հավաքվում են, իրենք փախչում են: Էդ ընթացքում ես սուր ծակոց եմ զգում, ձեռքս տանում եմ ուսիս ու տեսնում, որ արնահոսում եմ:Ու այս ամենը միայն սանրվածքի պատճառով»,- պատմում է Արտակը: Կատարվածը որպես այդպիսին առաջին անգամն էր, բայց արտաքինի և սեռական կողմնորոշման՝ այն է՝ նույնասեռական լինելու պատճառով խտրականությանը նա բնավ անծանոթ չէ: «Որտեղ ուզում էի աշխատանքի ընդունվել, ասում էին մազերդ կտրի, ես էլ ասում էի՝ հաջողություն: Մի տեղ ի վերջո հաջողվեց. Լոֆթ ռում սրճարան ընդունվեցի որպես մատուցող, բայց էլի մազերիս հոժար չէին, ուղղակի աշխատողի կարիք շատ ունեին՝ վերցրին»,-ասում է Արտակը: Երկար փնտրտուքից հետո, որոշեց, որ ինքը պիտի դառնա իր սեփական գործատուն և հիմնեց խաղաղաշինական իր ՀԿ-ն՝ նպատակ ունենալով կապեր ստեղծել Հայաստանում փոքրամասնություն կազմող խմբերի միջև: Մի քանի տարուց Արտակը իրեն տեսնում է արդեն որպես կայացած փաստաբան ու կրկին ակտիվորեն մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվելիս, ինչի համար լավ կրթություն է անհրաժեշտ, որը, սակայն, հեշտ չի տրվում: «Ո՞րն ասեմ, որ քոլեջում ( Երևանի տարածաշրջանային հ. 2 պետական քոլեջն էր) երրորդ կուրսում ոչ մեկը կողքս չէր նստում, թե՞ որ ամբողջ դասին մազերս էին քննարկում կամ հիմա, որ գնում եմ համալսարան, ու՞մ ա հաճելի ծաղրանքներ լսելը, դրա համար էլ գերադասում եմ հազվադեպ գնալ»,-ասում է Արտակը: Բանակային ծառայության նա չի մեկնել, ազատվել է. «Վերջին բժշկական փորձաքննությունն էր, ներս եմ մտնում, բարձրաստիճան մի սպա դեմքիս ա շպրտում գործերիս թղթապանակը ու սկսում հայհոյել ինձ, ծնողներիս, մինչև մտնելն էլ լսում էի՝ ոնց են խոսքի մեջ ինձ «գոմիկ» անվանում: Էդ սպան ինձ ասում ա, որ ինքը վստահ էր, որ իր քաղաքից «ըտենցը» չի լինելու: Իհարկե, ես հետո դիմեցի ոստիկանություն և Գլխավոր դատախազություն, ու էդ մարդը ազատվեց իր պաշտոնից: Բայց հետո գործը կարճվեց հանցակազմի բացակայության պատճառով, չնայած սենյակում մոտ 15 հոգի նստած մարդ կար: Դրանից հետո բողոքարկեցի ռազմական ոստիկանություն, էնտեղ էլ մերժվելուց հետո՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, ու պատրաստ եմ հարկ եղած դեպքում մինչև ՄԻԵԴ էլ հասնել»,-ասում է Արտակը: Նա իր պատմությամբ միակը չէ, ու, եթե գրվելու լինեն, կգրվեն բազմաթիվ միմյանցից տարբեր պատմություններ, բոլորի առանցքում էլ անհանդուրժողականությունը ու դրանից բխող այլևայլ հետևանքները, որոնք գալիս են հաստատելու, որ Հայաստանում ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքը ոչ միշտ է միանշանակ, և ավելի հաճախ այն ընդգծված բացասական է:

## ԳԵՅ ԱՆՁԱՆՑ ԿՅԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՄԱՍ 2

Վերջին տարիների ընթացքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն արձանագրել է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով բռնության և խտրականության բազմաթիվ դեպքեր, տրամադրել աջակցություն, ինչպես նաև նպաստել մարդկանց իրազեկվածության բարձրացմանը՝ այդպիսով նվազեցնելով հետագա ռիսկերը: Սամվելն (անունն իր կամքով փոփոխված է) արդեն 5-ից 6 տարի է՝ աշխատում է սպասարկման ոլորտում, մատուցող

է, դժվարանում է հիշել, թե քանի աշխատավայր է ստիպված եղել փոխել: Մասնագիտություն ևս ունի, բայց քանի որ կրթությունը միջին մասնագիտական է, աշխատանք գտնել չի հաջողվել:
Քոլեջում, որտեղ նա էր սովորում, գիտեին նրան որպես տարբերվող հագնվողի, ու անգամ սա բավարար էր խնդիրների և թարսուշիտակ հայացքների համար: «Հիշում եմ՝ ես չէի հագնում ընդունված սև շալվար, այլ՝ պատռված ջինս, կեդերով էի ու երկար բլուզներով: Եվ սա առիթ էր տղաների համար ինձ հետ կռիվներ սարքելու»,-պատմում է Սամվելը: Ընտանիքին իր կողմնորոշման մասին պատմելը հեշտ չի եղել՝ հատկապես, որ դրան հաջորդել է բռնությունների մի ամբողջ փունջ. «Ես 16-17 տարեկան էի, երբ ծնողներիս պատմեցի իմ կողմնորոշման մասին, իրենք ինձ ծեծեցին, փակեցին սենյակում ու չէին թողնում՝ աշխատանքի գնամ այնքան ժամանակ, մինչև իմ գործատուն չզանգեց ու չհամոզեց հորս: Հիմա էլ, չնայած բավականին ժամանակ է անցել, բայց իրենք չեն հավատում, որ ես գեյ եմ, ուղղակի կարծում են, որ վատ շրջապատ եմ ընկել»,-ասում է Սամվելը: Անընդհատ ծագող խնդիրներից խուսափելու համար նա մշտապես իր սեռական կողմնորոշումը թաքցնելու խնդիր ունի, և նույնիսկ այս դեպքում խնդիրները Սամվելին ինչ-որ պատահականությամբ գտնելու հատկություն ունեն: «Մի որոշ ժամանակ առաջ ԼԳԲՏ հավաքույթ էր կազմակերպվել, որին ես էլ էի մասնակցում ու չգիտեմ ոնց դրա մասին իմանում է քեռուս տղան ու սպառնում ինձ բացահայտել: Պարզվում է՝ միջոցառման անվտանգության աշխատակիցը նրա ընկերն էր ու ասել է, որ ինձ տեսել է էնտեղ: Ես ստիպված սպառնում եմ, որ երկուսի դեմ էլ ոստիկանությունում դիմում կգրեմ, միայն թե ինձ հանգիստ թողնեն»,- ասում է նա: Ընտանիքի անդամների կողմից Սամվելի անձնական կյանքը քննարկվել ու քննադատվել է շատ, իսկ ինքը դրանցից մասամբ խուսափելու ձևը գտել է՝ գումար է տալիս՝ անձնական կյանքով ապրելու համար վճարում է: «Էնպես չի շատ-շատ եմ վաստակում, բայց օրը 2000, 3000 երբեմն էլ 5000 տալիս եմ: Իսկ հիմա (ՔՈՎԻԴ19-ով պայմանավորված կարանտինի օրերին), որ չեմ աշխատում, աջակցություն եմ ստանում ու դրանից մի քիչ էլ պահում, որ տնեցիներին տամ»,- պատմում է նա: Սամվելի համար Հայաստանում ապրելը հեշտ չէ, ինքն իրեն ապահով զգալու խնդիր ունի: Տնից դուրս գալիս ինչ վերցնի-չվերցնի, ինքնապաշտպանական որևէ միջոց անպայման հետն ունենում է. երբեք չես իմանա՝ երբ և ում կհանդիպես: «Մի քանի օր առաջ էր՝ ընկերներով իջել էինք սնունդ գնելու: Երբ փողոցով անցնում էինք, երկու տղա էին կանգնած. մեկն ինձ վրա օգտագործած անձեռոցիկ շպրտեց, ու ես մինչև փորձեցի պարզել՝ ինչի համար, տեսա դանակ է հանում գրպանից: Սկսեցի ավելի շատ խոսել, որ ընկերս հասցնի էլեկտրաշոկը հանել պայուսակից: Լավ էր՝ հենց էդ տեսան, հետ քաշվեցին, մենք էլ արագ գնացինք»,- պատմում է Սամվելը: Ունենալ ընտանիքի աջակցությունը և վստահությունը, երբ ամենաշատը կա դրա կարիքը, անգնահատելի է: Դրան հասնել հնարավոր է, երբեմն էլ, գուցե՝ ոչ:

Ունենալ ընտանիքի աջակցությունը և վստահությունը, երբ ամենաշատը կա դրա կարիքը, անգնահատելի է: Դրան հասնել հնարավոր է, երբեմն էլ, գուցե՝ ոչ: «Այդ օրը ես քնած էի, երբ եղբայրս թաքուն կարդում է հեռախոսիս նամակագրությունը ու պատմում մամայիս, նա էլ՝ հորս: Բոլորով գալիս են ինձ արթնացնում, հարցեր տալիս, հետո ասում՝ քնի առավոտը կխոսենք, էնպես, որ առավոտյան զարթնելս չէր գալիս»,-պատմում է Ռուդոլֆը: Այդ օրվանից նա մշտապես փակված է եղել տանը, հոր պահանջով դադարել է շփվել ընկերների հետ ու մշտական վերահսկողության տակ է եղել, իսկ փախուստի փորձերը եղել են ապարդյուն. «Ես ասում էի, որ կփախնեմ տնից, հայրս ասում էր՝ ուր ուզում ես գնա, մեկ ա քեզ էլ եմ գտնելու, ընկերներիդ էլ, բայց, որ գտնեմ, լավ չի լինելու»,-ասում է Ռուդոլֆը: Ստեղծված իրավիճակից դուրս գալու մի ելք կար՝ հավատացնել ընտանիքին, որ ինքը փոխվել է: Ստացվեց:

## ԱՅԼՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԴԻԱ

«Իմ մայրը շատ հավատացյալ կին է, ես, երբ քնած էի լինում, ինքը իր աղոթագրքերը բերում էր, աղոթում էր, որ ես փոխվեմ, դևերը միջիցս դուրս գան, ու ես ձևացնում էի, որ դա ազդում է: Ի վերջո, ինձ սկսեցին հավատալ, հայրս նույնիսկ ասաց, որ չէր պատկերացնում, որ նորից կսիրի որդուն, միայն եղբայրս է, որ չի հավատում, բայց վերջերս ինձ ասեց, որ քո կյանքն ա՝ ոնց ուզում ես ապրի»,- պատմում է Ռուդոլֆը: Որոշակի վստահություն ձեռք բերելուց հետո պահեստում աշխատանքի անցավ, բայց էնտեղ ոչ մեկը չգիտի իր սեռական կողմնորոշման մասին, իր խոսքով բոլոր աշխատողները տղաներ են. ավելորդ կոնֆլիկտի կարիք չկա: Պահեստի աշխատանքից զատ, երբ ժամանակ է ունենում, զբաղվում է նաև գրաֆիկ դիզայնով, ու հիմա, քանի որ ազատ ժամանակ շատ կա, կատարելագործում է հմտությունները: «Ինձ համար հիմա համեմատաբար վատ չի, բայց հետագայում ես հաստատ արտասահման եմ մեկնելու, որպեսզի լիարժեք երջանիկ ինձ զգամ: Ես էլ կուզեի չխաբել ընտանիքիս, պատմել իրականությունը, բայց դրանից հետո հնարավոր է հայրս դանակը վերցնի ու մտցնի փորս, հետո էլ իրեն վնասի, դրա համար էս վիճակն ավելի գերադասելի ա»,-եզրափակում է Ռուդոլֆը: Հանրապետության և նույնիսկ քաղաքի տարբեր շրջաններով պայմանավորված՝ մասնակիորեն փոխվում է նաև մարդկանց վերաբերմունքի շրջանակը այս կամ այն թեմայի վերաբերյալ: Կարենը (անունն իր կամքով փոխված է) գնացքով Գյումրիից գալիս է Երևան, Գյումրի ընկերոջը տեսության էր գնացել, իսկ գործողությունները այնտեղ մի փոքր այլ ընթացք էին ստացել: «Քաղաքի ոչ կենտրոնական հատվածում սովորական նստած էինք, երևի մեր հագուստն էր մի քիչ անսովոր իրենց համար, երբ մի մարդ մոտեցավ մեզ, սկսեց վիրավորել՝ հայհոյում էր ու մեղադրում Գյումրի վատ բաներ բերելու մեջ: Որոշեցինք ուղղակի հեռանալ, ինքը շարունակում էր մեզ հետապնդել՝ ընթացքում էլ սպառնալով, որ բոլորին պատմելու է՝ մենք ով ենք ու, եթե ճանապարհին իր ծանոթին չհանդիպեր, մեր հետևից գալու էր: Սրա մասին մենք պատմեցինք ընկերոջս ծնողներին, որպեսզի լսելու դեպքում չհավատան, բայց ես հիմա շատ անհանգստացած եմ իր համար»,- կատարվածը պատմում է Կարենը: Իսկ ինչ վերաբերում է առհասարակ Հայաստանում ապրելուն, ինքը այստեղ իրեն հարմարավետ է զգում, չնայած, իր խոսքով, գուցե նրանից է, որ ապրում է Երևանի կենտրոնում և չի բացառում, որ ավելի ծայրամասային հատվածներում բնակվող ԼԳԲՏ համայնքի անդամների համար այնքան էլ հեշտ չէ: «Այնուամենայնիվ, առաջընթաց ես տեսնում եմ. թեկուզ այն, որ Գյումրիում կատարվածը քիչ է հավանական, որ Երևանում տեղի կունենար այսօր, արդեն վկայում է որոշակի փոփոխության մասին»,-ասում է Կարենը:

Հանրապետության և նույնիսկ քաղաքի տարբեր շրջաններով պայմանավորված՝ մասնակիորեն փոխվում է նաև մարդկանց վերաբերմունքի շրջանակը այս կամ այն թեմայի վերաբերյալ: Կարենը (անունն իր կամքով փոխված է) գնացքով Գյումրիից գալիս է Երևան, Գյումրի ընկերոջը տեսության էր գնացել, իսկ գործողությունները այնտեղ մի փոքր այլ ընթացք էին ստացել: «Քաղաքի ոչ կենտրոնական հատվածում սովորական նստած էինք, երևի մեր հագուստն էր մի քիչ անսովոր իրենց համար, երբ մի մարդ մոտեցավ մեզ, սկսեց վիրավորել՝ հայհոյում էր ու մեղադրում Գյումրի վատ բաներ բերելու մեջ: Որոշեցինք ուղղակի հեռանալ, ինքը շարունակում էր մեզ հետապնդել՝ ընթացքում էլ սպառնալով, որ բոլորին պատմելու է՝ մենք ով ենք ու, եթե ճանապարհին իր ծանոթին չհանդիպեր, մեր հետևից գալու էր: Սրա մասին մենք պատմեցինք ընկերոջս ծնողներին, որպեսզի լսելու դեպքում չհավատան, բայց ես հիմա շատ անհանգստացած եմ իր համար»,- կատարվածը պատմում է Կարենը: Իսկ ինչ վերաբերում է առհասարակ Հայաստանում ապրելուն, ինքը այստեղ իրեն հարմարավետ է զգում, չնայած, իր խոսքով, գուցե նրանից է, որ ապրում է Երևանի կենտրոնում և չի բացառում, որ ավելի ծայրամասային հատվածներում բնակվող ԼԳԲՏ համայնքի անդամների համար այնքան էլ հեշտ չէ:

## ԱՅԼՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԴԻԱ

«Այնուամենայնիվ, առաջընթաց ես տեսնում եմ. թեկուզ այն, որ Գյումրիում կատարվածը քիչ է հավանական, որ Երևանում տեղի կունենար այսօր, արդեն վկայում է որոշակի փոփոխության մասին»,-ասում է Կարենը: 19-ամյա Սարգիսի դեպքը կարելի է համարել եզակիներից: Նա դաշնակահար-կոմպոզիտոր է, Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական քոլեջն է ավարտել ու դեռ ուսանողական տարիքից արդեն իր մոտ պարապող ուսանողներ է ունեցել: Հարցին՝ ինչ է կարծում՝ կշարունակեին իր մոտ պարապել ուսանողները, եթե իմանային, որ նա նույնասեռական է, մի քանի վայրկյան մտածելուց հետո ասում է՝ չէ, միանշանակ, չէ: Սարգիսը իր կողմնորոշման պատճառով ո՛չ քոլեջում և ո՛չ որևէ այլ տեղ երբևէ խնդիրներ չի ունեցել, իր խոսքով՝ բոլորը նրան այնտեղ ճանաչել են իբրև ֆանտաստիկ լավ նվագող, բայց քչերի հետ շփվող տղա: «Քոլեջում ես ոչ ասում էի՝ գեյ եմ, ոչ էլ հատուկ թաքցնում էի: Իրականում արվեստագետների շրջանում մարդիկ մի քիչ այլ վերաբերմունք ունեն, ու դա շատ լավ է: Բայց, եթե ինչ, ես շատ լավ ընկերներ եմ ունեցել այնտեղ, ովքեր հաստատ ցանկացած դեպքում մինչև վերջ իմ կողքին էին լինելու, ու նրանց բացարձակ մեծամասնությունն էլ հետերոսեքսուալ էր»,-ասում է նա: Նախքան ընտանիքի հետ խոսելը Սարգիսը երկար ժամանակ ծնողներին պատրաստել է այդ լուրին ու ինքն էլ իր հերթին պատրաստվել, որ իրեն տանից դուրս են անելու, բայց ի պատասխան՝ ստացել ցնցող մի ապտակ: «Ասեցի, վեջացրի ու հարցնում եմ՝ մամ, բա հիմա ինձ տանից դուրս չե՞ք անելու, մաման էլ մի հատ էնպես ապտակեց, իբր՝ ի՞նչ ես խոսում, դու մեր տղան ես ու մեր հետ պիտի մնաս: Չեք պատկերացնի՝ ինչ լավ է, երբ ծնողիդ աջակցությունը ու վստահությունը կա: Ես վստահ եմ, որ մայրս իմանա՝ մեկին տանից հանել են գեյ լինելու համար, կասի՝ արի մեր տանը մնա»,-պատմում է Սարգիսը: Ինչ վերաբերում է հետագա կյանքին, ինքը վստահ է՝ երբևէ այլ տեղ չի գնալու, իր հայրենիքը Հայաստանն է, ու մյուսներին ևս կոչ է անում մնալ այստեղ, իրենց ձայնը լսելի դարձնել ու ցույց տալ, որ իրենք ևս գոյություն ունեն.

«Իսկ բանակ չգնացի զուտ այն պատճառով, որ իմ անվտանգությունը չէին կարող ապահովել, հակառակ դեպքում սա նույնքան էլ իմ հայրենիքն է, որի պաշտպանության համար ծառայելուց ես բնավ չեմ խուսափում»,-ասում է Սարգիսը: Ներկայացված պատմությունները, որքան էլ թվան միմյանցից տարբեր, դրանցում եղած ընդհանրությունները ակնհայտ են, իսկ պահանջը՝ չխտրականացնել մարդկանց և ոչ մի հատկանիշով, չդրդել ոչ ոքի մեկուսանալ և զգալ ոչ լիարժեք: Խրախուսել միմյանց լինել ազատ, գործել համարձակ և գիտակցել, որ խտրականության և ոչ մի դրսևորում որևէ լավ բանի չի հանգեցնում, փոխարենը մասնատում և բաժանում է հասարակությանը: «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Անահիտ Մկրտչյանի խոսքով հատկանշական է այն, որ ՀՀ-ում խտրականության դեմ համապարփակ օրենսդրություն դեռևս չկա: Եվ չնայած ՀՀ Սահմանադրությամբ և մի քանի իրավական ակտերով մասնակի նախատեսվում է խտրականության արգելքը, սակայն բացակայում են «խտրականություն» հասկացության սահմանումն ու դրանից պաշտպանվելու իրավական մեխանիզմները: «Այս պարագայում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության ենթարկված անձանց մնում է քաղաքացիաիրավական պաշտպանության մեթոդով դիմել դատարան՝ վիրավորանքի և զրպարտության համար կամ, եթե առկա է բռնություն, ֆիզիկական վնասվածքներ, ոստիկանություն քրեական գործ հարուցելու համար: Սակայն նշված բոլոր դեպքերում էլ անդրադարձ չի կատարվի խտրականության առկայությանը, քանի որ առկա չեն այնպիսի իրավակարգավորումներ, որոնց հղում կտան իրավապահ մարմինները»,-ասում է Անահիտ Մկրտչյանը և հավելում, որ արդեն նախագծի տեսքով առկա «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի ընդունումը խտրականության կանխարգելման գործընթացում կընձեռի նոր հնարավորություններ:

**ՌԻՄԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

## ՏՐԱՆՍ ԿԱՆԱՆՑ ԿՅԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է, բոլորն ունեն հավասար իրավունքներ՝այսպես է նշված ՀՀ սահմանադրության երրորդ հոդվածում: Ինչպես յուրաքանչյուր երկրում, այնպես էլ Հայաստանում կան խոցելի խմբեր, որոնց իրավունքները խախտվում են, օրինակ՝ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով: 27-ամյա Քրիստինայի (անունը փոխված է) տրանսգենդեր լինելու մասին ընտանիքում իմացան, երբ նա 15 տարեկան էր. «Ինձ 14 օր մեկուսարանում են պահել, մտածել են, որ երեխա է՝կփոխվի: Այդ ժամանակ համոզեցի, որ տեղեկությունը սուտ է, որպեսզի դուրս գամ մեկուսարանից»: Այս դեպքից հետո Քրիստինան փախել է տնից ու այլևս չի վերադարձել: Այժմ Քրիստինան զբաղվում է սեքս աշխատանքով. «Գենդերային ինքնությամբ պայմանավորված այլ աշխատանք չեմ կարողանում գտնել, գործատուները հրաժարվում են աշխատել ինձ հետ»: Փաստաբան Անահիտ Մկրտչյանի խոսքով՝ թեև աշխատանքային օրենսգրքում խտրականության արգելքի մասին հոդված կա, բայց և այնպես չի գործում. «Գործատուին պատասխանատվության ենթարկել չենք կարող, քանի որ նրանք, իմանալով, որ տրանսգենդեր անձի հետ գործ ունեն, ազատման դիմումի մեջ ուրիշ հիմք են նշում»: Քրիստինայի խոսքով՝ Հայաստանում իրենց ճակատին դաջված է ենթարկվել բռնության, խարանի ու խտրականության. «Վերջերս երկու հոգի իմ կամքին հակառակ սեռական բռնություն են գործադրել իմ նկատմամբ, ու, երբ զանգեցի ոստիկանություն, արձագանք չստացա: Հետո գնացի ոստիկանություն, բողոքեցի կատարվածի մասին, բայց դարձյալ, ինչպես միշտ, գործը կարճվեց. պատճառն այն է, որ ես տրանս անձ եմ»: 21-ամյա տրանսգենդեր Նորայի խոսքով՝ վերջին անգամ բռնության է ենթարկվել 2019 թվականի հոկտեմբերի 31-ին՝ Հելոուինի տոնի ժամանակ. «Ընկերներով դուրս էինք եկել փողոց՝ այդ տոնը նշելու, մի քանի հոմոֆոբներ հարձակվեցին մեզ վրա՝պատճառաբանելով, որ մենք տրանս անձինք ենք»: Նորայի խոսքով, այս դեպքից հետո դիմել են ոստիկանություն, բայց ոչ մի արձագանք չի եղել: Փաստաբանը նշում է, որ նման դեպքերում ոստիկանությունում, երբ տեսնում են տրանս անձ է իրենց դիմողը, գործին ընթացք չեն տալիս, կարճում են գործը՝ նշելով, որ բավարար հիմքեր չկան գործ հարուցելու համար: Մեր հարցմանն ի պատասխան, այն մասին, թե վերջին մեկ տարվա կտրվածքով քանի քրեական գործ է հարուցվել տրանսգենդեր անձանց նկատմամբ և քանիսն են դրանցից կարճվել՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության շտաբի պետ, ոստիկանության գնդապետ Արմեն Ղուկասյանը նշել է, որ ՀՀ ոստիկանությունում տրանսգենդեր անձանց նկատմամբ և նրանց կողմից հանցագործությունների վերաբերյալ առանձին հաշվառում չի իրականացվում: Հայաստանում տրանսգենդեր անձինք օրենսդրորեն լիարժեք պաշտպանված չեն, քանզի չկա խտրականության վերաբերյալ առանձին օրենք, որտեղ նշված կլինի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքի մասին: Անահիտ Մկրտչյանի խոսքով՝ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության ենթարկված անձինք կարող են դիմել իրավական պաշտպանության հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածը, որը սահմանում է խտրականության արգելքը անկախ անձնական և սոցիալական բնույթի հանգամանքներից: Տրանսգենդեր Նորան նշում է, որ ընտանիքի կողմից ենթարկվել է հոգեբանական, ֆիզիկական և տնտեսական բռնության, 18 տարին լրանալուն պես փախել է տնից. «Նախկինում շատ էի նեղվում այն փաստից, որ հասարակությունը կարող է չընդունել ինձ: Երբ դադարում ես հասարակության լիիրավ անդամ լինել հոգեբանորեն դժվար է հարմարվել դրան»: Նշենք նաև, որ 2019 թվականի մայիսի 25-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հաստատած

## ԱՅԼՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԴԻԱ

հիվանդությունների միջազգային դասակարգչի 11-րդ վերանայմամբ գենդերային անհարմարությունը հանվել է հոգեկան խանգարումների շարքից՝ տեղափոխվելով սեռական առողջության բաժին: Փաստաբան Անահիտ Մկրտչյանի խոսքով՝ Հայաստանում տրանս անձինք չեն կարող կատարել սեռափոխության վիրահատություն՝ օրենսդրական կարգավորումների բացակայության պատճառով: Վերջիններս խնդիրների են հանդիպում նաև փաստաթղթերում փոփոխություն կատարելու գործընթացում: Օրինակ՝ հնարավոր է անձնագրում փոխել անունը, ազգանունը, նկարը, սակայն ոչ սեռը: Սեռի վերաբերյալ նշումը հնարավոր է փոխել միայն, երբ բժշկական կազմակերպությունը տվել է սեռի փոփոխության մասին սահմանված ձևի փաստաթուղթ: Սակայն, ինչպես արդեն նշվեց, Հայաստանի Հանրապետությունում սեռափոխության վիրահատություններ չեն իրականացվում: Այդուհանդերձ հարցված տրանս կանանց խոսքով, Հայաստանում տրանսգենդերները շարունակում են մնալ հասարակության կողմից անընդունելի: Թիրախային խմբերը բազմիցս հակասություններ են ունենում հասարակության տարբեր շերտերի հետ, ինչը կարող է ունենալ իր լավ կամ վատ հետևանքը, բայց, ամեն դեպքում, օրենքը պետք է լինի գերակա և հավասար բոլորի համար:

**Անհրաժեշտ հասկացություններ /հապավումներ**

- **ԼԳԲՏ** - Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր
- **Տրանսգենդեր** - Մարդ, ում հոգեսոցիալական սեռը չի համընկնում ծննդյան պահին վերագրված սեռին:
- **Հոմոֆոբ** - Նույնասեռական անձի նկատմամբ ատելություն ունեցող մարդ:
- **Հետերոսեքսուալ** - Մարդ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի հակառակ սեռի անձանց նկատմամբ:

**Շուշանիկ Միսկարյան**

## ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

2020թ.-ի մայիսի 1-ին մեկնարկեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից ենթադրամաշնորհների տրամադրումը «Կարողությունների զարգացում և հզորացում՝ հանուն Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության» ծրագրի շրջանակներում՝ ուղղված ԼԳԲՏԻ անձանց հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների հզորացմանը: Առաջին ենթադրամաշնորհը տրամադրվեց «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ին՝ «Ջատագովելով սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքը քրեակատարողական հիմնարկներում» ծրագրի իրականացման համար:

Ծրագրի երկարաժամկետ նպատակն է՝ նպաստել ԼԳԲՏԻ և SUS ազատազրկված անձանց հավասարության և խտրականության չենթարկվելու իրավունքի ապահովմանը: Ծրագրի միջնաժամկետ նպատակն է՝ նպաստել ԼԳԲՏԻ և SUS ազատազրկված անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքականության փաստաթղթերի և ընթացակարգերի մշակմանը: Ծրագրի կարճաժամկետ նպատակն է՝ նպաստել հանրության և որոշում կայացնողների շրջանում ԼԳԲՏԻ և SUS ազատազրկված անձանց նկատմամբ զգայունության և տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը: Շնորհավորում ենք «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ին՝ վստահ լինելով նշված նպատակների բարեհաջող իրականացման և արդյունավետ համագործակցության վրա՝ ի նպաստ ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությանը և խտրականության վերացմանը Հայաստանում:

## ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

2020թ.-ի մայիսի 6-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից տրամադրվեց երկրորդ ենթադրամաշնորհը «Կարողությունների զարգացում և հզորացում՝ հանուն Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության» ծրագրի շրջանակներում՝ ուղղված ԼԳԲՏԻ անձանց հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների հզորացմանը: Երկրորդ ենթադրամաշնորհը տրամադրվեց «Հավասարություն բոլորի համար» ՀԿ-ին՝ «Միասին հանուն յուրաքանչյուրի առողջության» ծրագրի իրականացման համար:

Ծրագրի նպատակն է բարձրացնել տեղեկացվածության մակարդակը SUS և տրանս համայնքի շրջանում սեռական առողջության և սեռական ապահով վարքագծի վերաբերյալ: Ծրագրի շրջանակում նախատեսվում է անցկացնել օնլայն դասընթացներ վերոնշյալ թեմաներով, որոնց արդյունքում ծրագրի շահառուները ձեռք կբերեն գիտելիքներ սեռական առողջության և սեռական ապահով վարքագծի մասին և դրանք կփոխանցեն համայնքի այլ անդամներին:Ծրագրի շրջանակում կտպագրվի նաև տեղեկատվական գրքույկ, որը նույնպես կնպաստի իրազեկվածության բարձրացմանը և հարյուրավոր շահառուներ կտեղեկանան սեռական առողջության և սեռական ապահով վարքագծի, խնդիրների առկայության և դրանց լուծման մասին:Շնորհավորում ենք «Հավասարություն բոլորի համար» ՀԿ-ին՝ վստահ լինելով նշված նպատակների բարեհաջող իրականացման և արդյունավետ համագործակցության վրա՝ ի նպաստ ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությանը և խտրականության վերացմանը Հայաստանում:

2020թ.-ի մայիսի 12-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից տրամադրվեց երրորդ ենթադրամաշնորհը «Կարողությունների զարգացում և հզորացում՝ հանուն Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության» ծրագրի շրջանակներում՝ ուղղված ԼԳԲՏԻ անձանց հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների և նախաձեռնող խմբերի հզորացմանը:Ենթադրամաշնորհը տրամադրվել է իրավաբան, փաստաբան Արա Ղարագյոզյանին՝ ուղղված տրանս անձի իրավունքների պաշտպանության դատավարության իրականացմանը: Վերջինս բռնության է ենթարկվել սեռական ծառայությունների մատուցման ժամանակ: Հարուցվել է քրեական գործ, սակայն ավելին քան 3 տարի է՝ դատարանը չի ապահովել տուժողի իրավունքների պաշտպանությունը: Տուժողի նկատմամբ ատելությունն ու խտրականությունը հիմնված բացառապես անձի գենդերային ինքնության վրա ակնհայտորեն դրսևորվում են դատավորների և հակառակ կողմի փաստաբանի կողմից, ով ամեն ինչ անում է մեղավորի պատիժը հնարավորինս մեղմացնելու համար:

Այս դատավարությանն ուղղված ենթադրամաշնորհի տրամադրումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն տրանս անձի իրավունքների վերականգնման և ՍԿԳԻ հիմքով ատելության հանցանքների անպատժելիության վերացման համար համապատասխան մեխանիզմներ գործի դնելու տեսանկյունից:Շնորհավորում ենք Արա Ղարագյոզյանին՝ վստահ լինելով նշված նպատակների բարեհաջող իրականացման և արդյունավետ համագործակցության վրա՝ ի նպաստ ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությանը և խտրականության վերացմանը Հայաստանում:

# ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն շարունակում է ժամանակավոր կացարանի տրամադրման հայտերի հավաքագրումը այն ԼԳԲՏԻ (լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանս*), SUS (տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդ) և ԿՍԿ-երի (կոմերցիոն սեռական ծառայություն մատուցող կանանց) համար, որոնք

- ենթարկվել են խարանի, խտրականության, բռնության և խոշտանգումների,
- COVID-19-ի համավարակի հետևանքներով պայմանավորված՝ մնացել են առանց ապաստարանի և ընտանիքի աջակցության,
- կորցրել են աշխատանքը և չունեն այլ ֆինանսական եկամուտ:

ժամանակավոր կացարանի համար անհրաժեշտ է դիմել հետևյալ հղումով կամ սկանավորել QR կոդը

## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՍՆՆԴԻ ՓԱԹԵԹՆԵՐ՝ COVID-19-ԻՑ ՏՈՒԺԱԾ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻՆ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ՁԻԱՀ-ի դեմ պայքարի Էլթոն Ջոնի հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ տրամադրում է մեկ ամսվա համար նախատեսված սնունդի փաթեթներ ՀՀ-ում բնակվող այն SUS և ԼԳԲՏԻ անձանց, թմրամիջոցներ ներարկային օգտագործողներին և կոմերցիոն սեռական ծառայություն մատուցող կանանց, որոնք Հայաստանում կորոնավիրուսային համավարակի հետևանքով կորցրել են աշխատանքը, զրկվել են ֆինանսական եկամտից և ապրուստի միջոցներից:

Սնունդի փաթեթները նախատեսված է տրամադրել առաջիկա մեկ տարվա ընթացքում:

Սնունդի փաթեթները ստանալու համար անհրաժեշտ է դիմել հետևյալ հղումով կամ սկանավորել QR կոդը